ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 18 » 04 2025թ. ք. Երևան № 121-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 73-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի՝ 2025 թվականի ապրիլի 17-ի թիվ 315-Ա որոշումը և Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2025 թվականի ապրիլի 14-ի թիվ 105-Ա հրամանը՝

Հրամայում եմ

1. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ 2022 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով մրցութային հանձնաժողով ձևավորելու մասին» N 73-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետում «Մուշեղ Բաբայան ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնակատար» բառերը փոխարինել «Գարեգին Բեգոյան ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետ» բառերով.

2) Հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետում «Արշալույս Մինասյան ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երրորդ վարչության պետի պաշտոնակատար» բառերը փոխարինել «Բորյա Չիլինգարյան ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երկրորդ վարչության պետի տեղակալ» բառերով.

3) Հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետում «Գարեգին Բեգոյան ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետի պաշտոնակատար» բառերը փոխարինել «Գեղամ Մարգարյան ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական առաջին վարչության պետի տեղակալ» բառերով.

4) Հրամանի 2-րդ կետում «նախագահի տեղակալի պաշտոնակատար Մ. Բաբայանին» բառերը փոխարինել «ներքին անվտանգության վարչության պետ Գարեգին Բեգոյանին» բառերով:

2. Անձնակազմի կառավարման վարչության պետին՝ սույն հրամանը ծանոթացնել Հանձնաժողովի անդամներին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Արդարադատության առաջին դասի խորհրդական՝

18.04.2025

X

Ա.Ա. Նահապետյան

Подписано: NAHAPETYAN ARTUR